«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2019-2020 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «19» սեպտեմբեր, 2019թ.

№	Նախատեսվող միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման օրը / շաբաթը	Համառոտ նկարագրությունը
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ				
1.	Կինոդիտում	«Եղիշե Չարենց։ Մահվան տեսիլ»	28.10-31.10	Նախատեսվում է, որ ներկա կլինեն «Հայոց լեզու և գրականություն» և «Պատմություն» մասնագիտությունների 10-15 ուսանողներ։
2.	Հանրամատչելի զեկուցում	Քաղաքների համաշխարհային օրվան նվիրված	31.10	Զեկուցման ընթացքում կխոսվեն աշխարհի հնագույն քաղաքների, նրանց էվոլյուցիայի, ինչպես նաև ժամանակակից քաղաքների մասին։ Անդրադարձ կկատարվի նաև համաշխարհային ուրբանիզացիային։

3.	Հանրամատչելի զեկուցում	«Արտասովոր թանգարաններ» թեմայով	11.11-17.11	Զեկուցման ընթացքում կխոսվի աշխարհի արտասովոր թանգարանների մասին, որոնք իրենց գրավչությամբ և այցելուների թվով ամենևին էլ չեն զիջում մյուս թանգարաններին:
Տնտեսագիտության ֆակուլտետ				
4.	Սեմինար-քննարկում	«Գլոբալիզացիայի դրական և բացասական հետևանքները ՀՀ-ի համար»	04.03-09.03	90-ականների սկզբին ՀՀ-ն անցում կատարեց շուկայական տնտեսական համակարգի, ինչը իրենից ենթադրում էր նախկին տնտեսակարգի գրեթե ամբողջական փլուզում: Խզվեցին մինչ այդ գոյություն ունեցող դիվանագիտական և տնտեսական կապերը: Սեմինարի ընթացքում կքննարկենք, թե ինչպիսի ձեռքբերումներ ունեցանք այդ ամենի արդյունքում և ինչպիսի փոխզիջումների ենք գնում՝ մեր տնտեսական և քաղաքական դիրքերը առավել բարելավելու համար:
5.	Սեմինար	«Լոբբիզմը Հայաստանում» թեմայով	10. 10-20. 10	Շահերի խմբերը դասակարգվում են ըստ գործունեության բնագավառի (տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային, կրոնական և այլն) և ըստ ներխմբային կապերի բնույթի (ասոցիատիվ և ոչ ասոցիատիվ): Շահերի արտաբերման միջոցով ձևակերպվում են որոշում ընդունող կառույցներին ներկայացվող

				պահանջները: Այս երևույթը կոչվում է լոբիզմ, որի ազդեցությանը կծանոթանանք ծրագրի իրականացման ընթացքում:
6.	Քննարկում	«ԴՎՔ արդյունավետությունը 90-ականներից մինչև մեր օրեր» թեմայով	01.11-10.11	Ուսանողները կծանոթանան ԿԲ-ի նպատակներին, գործառույթներին և իրականացրած դրամավակային քաղաքականության փուլերին: Կքննարկեն, թե որքանով է գնաճի նպատակադման ռազմավարությունը արդյունավետորեն զսպում և խթանում գնաճը և դիմակայում արտաքին տնտեսական շոկերին:
7.	Մասնագիտական «Այլ կերպ»	«Հարստացնենք մեր մասնագիտական բառապաշարը»	15. 11-25. 11	Ինտելեկտուալ բառախաղ, որը հնարավորություն կտա «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Սերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողներին արագ կողմնորոշվել և ունեցած բազայով դյուրին բացատրել տնտեսագիտական տերմինները՝ հնարավորին չափով կարճ ժամանակում:
Բնական գիտությունների ֆակուլտետ				
8.	Կինոդիտում-քննարկում	“Экзамен” գեղարվեստական ֆիլմ	29. 09-03. 10	Ուսանողներն այս դետեկտիվ-թրիլերում ականատես կլինեն բոլոր այն հոգեբանական ապրումներին, որոնք կարող են հանդիպել քննության ժամանակ, ինչպես նաև կհասկանան թմային աշխատանքի ու խուճապի չմատնվելու կարևորությունը:
9.	Բանավեճ-	Ամուլսարի հանքի	14. 10-20. 10	Բանավեճ-քննարկումը

	քննարկում	շահագործման թեմայով		տեղի կունենա Բնագիտական ու Տնտեսագիտության ֆակուլտետների ուսանողների միջև»
10.	Սեմինար	«Միկրոկոնտրոլեր և միկրոպրոցեսոր»	20. 10-26. 10	Ուսանողները կծանոթանանմիկրոկոնտրոլերի և միկրոպրոցեսորի հետ, թե ինչ նշանակություններ, կիրառություններ ու տարբերություններ ունեն:
11.	Մրցույթ	«Լավագույն ծրագրավորող 2019»	10.11-16.11	«ԻԿՄ» մասնագիտության ուսանողները կմրցեն մասնաճյուղի լավագույն ծրագրավորող կոչման համար: Մրցույթը նախատեսված է հետևյալ ֆորմատով. ուսանողներին կտրվի 1 ժամ ժամանակ, որի ընթացքում նրանք պետք է հնարավորինս արագ ու ճիշտ լուծեն տրված առաջադրանքները C++ լեզվով: Հետո գրված ծրագրերը թեստավորում կանցնեն, կստանան համապատասխան միավորները, իսկ ամենաշատ միավոր հավաքած ուսանողն էլ կդառնա մրցաշարի հաղթող:
12.	Կինոդիտում-քննարկում	"Джобс: Империя соблазна" գեղարվեստական ֆիլմ	18.11-24.11	Ուսանողները կծանոթանան աշխարհահռչակ բրենդի հիմնադիրի կյանքի հետ, կտեսնեն, թե ինչպես նա կարողացավ փոքր ավտոտնակից Apple ընկերությունը հասցնել իր ներկայիս մասշտաբներին:
13.	Սեմինար	«Random թվեր»	02.12-09.12	Ուսանողները կծանոթանան

				նախկին Random թվերի ու ներկայիս մեքենանրում գեներացվող Random թվերի տարբերության հետ, կիմանան թե ինչ ոլորտներում են կիրառվում դրանք, կսովորեն, թե ինչպես կարելի է ցանկացած որոշյալ ինտեգրալ հաշվել պատահական թվերի միջոցով, ինչպես նաև կծանոթանան «2048» խաղի մեջ պատաական թվերի կիրառությանը:
Կիրառական արվեստի ֆակուլտետ				
14.	Վարպետաց դասեր	Այլ ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար	Կիսամյակի ընթացքում (որոշակի պարբերա-կանությամբ)	Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցներում կկազմակերպվեն վարպետաց դասեր՝ ինչպես փորձառու դասախոսների, այնպես էլ՝ լավագույն ուսանողների գլխավորությամբ: Ծրագրի նպատակն է հաստատել կապ մնացած ֆակուլտետների հետ և հնարավություն տալ այլ ֆակուլտետներում սովորող մեր ընկերներին մի քանի ժամով կտրվել իրենց դասերից և մտնել մեկ ուրիշ աշխարհ:
15.	Հուշանվերների բաց կենտրոն	ԵՊՀ ԻՄ-ի տարածքում	Կիսամյակի ընթացքում	Այն իրենից ներկայացնելու է մեկ վայր, որտեղ կհավաքվեն նախկին և ներկայիս ուսանողների լավագույն աշխատանքները, պարբերաբար թարմացմամբ կցուցադրվեն բոլոր ցանկացողներին և ինչու ոչ՝ կվաճառվեն:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ կենտրոնական կառույց				
16.	Ինտելեկտուալ խաղ	«Ամենախելացին»	24.09	«Ամենախելացին» տիտղոսի համար պայքարելու են մասնաճյուղի 10 ուսանողներ։ Խաղի 2-րդ և 3-րդ փուլի համար ստեղծված է համակարգչային ծրագիր HTML, JavaScript, CSS և C++ ծրագրավորման լեզուների օգնությամբ, որը թույլ է տալիս խաղը մոտեցնել համանուն հեռուստաշոուի ձևաչափին։
17.	Հանրապետական գիտաժողով	Նվիրված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին	04. 10-05. 10	Գիտաժողովին մասնակցելու են շուրջ 25 ուսանողներ, որից ոչ պակաս, քան 60 տոկոսը կազմում են այլ համալսարանի ուսանողները։ Նախատեսվում է մասնակից ուսանողների հոդվածների տպագրություն։
18.	Շախմատի մասնաճյուղային առաջնություն	Նվիրված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին	Հոկտեմբեր-նոյեմբեր	Նախորդ 2 կիսամյակների փորձով կազմակերպվելու է շախմատի մասնաճյուղային առաջնություն, որի համար արդեն իսկ սահմանված է փոխանցիկ գավաթ։
19.	Ինտելեկտուալ խաղ	10-ից 12-րդ դասարանի աշակերտների համար	Կիսամյակի ընթացքում	Խաղը նախատեսված է Իջևան քաղաքում և հարակից բնակավայրերում սովորող 10-ից 12-րդ դասարանի աշակերտների համար։ ՈՒԳԸ անդամները կայցելեն տարբեր դպրոցներ և կանցկացնեն խաղը։
20.	Ինտելեկտուալ խաղ	Մասնաճյուղային առաջնություն	նոյեմբեր	Ամբողջ մասնաճյուղից կկազմվեն թիմեր / ըստ կուրսերի կամ մասնագիտությունների/։

				Առաջնության հաղթողը կորոշվի 1 խաղի ընթացքում։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Հ. Ղարագյոզյան

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղար՝ Ա. Բաղիյան